# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 02.08.2017թ.

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի**

**թիվ ՍՑ-ԷՍ-2017/05**

Հայաստանի Հանրապետության գնումների բողոքարկման խորհրուրդը (այսուհետ՝ նաև Խորհուրդ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 24.05.2017թ. թիվ 03/73-3/9197-17 գրությամբ «Սեդարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 18.05.2017թ. թիվ ԴՎԱ/1439 գրության հիման վրա, 24.05.2017թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում նախաձեռնել է «Սեդարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

ՀՀ ֆինանսների նախարարությունը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամանակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

**2. <u>ՀՀ պաշտպանության նախարարության ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1439 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հայտերի բացման նիստից հետո «Սեդարա» ՍՊԸ-ն ծանուցվել է ներկայացնելու Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, այդ թվում կարգի 35-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը: Սահմանված ժամկետում «Սեդարա» ՍՊԸ-ն որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը չի ներկայացրել:

Հաշվի առնելով վերոգրյալը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 10.02.2017թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետը որոշեց մերժել «Սեդարա» ՍՊԸ-ի հայտը»:

Պատվիրատուի կողմից ներկայացված փաստաթղթերում առկա է ծանուցում և տվյալ ծանուցման հիմնավորվածությունն ապացուցելու նպատակով վերջինիս կողմից էլեկտրոնային փոստից արտատպված փաստաթուղթն այն մասին, որ 02.05.2017թ. ծանուցել է Ընկերությանը՝ որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերը ներկայացնելու վերաբերյալ:

Պատվիրատուն կից ներկայացրել է «Սեդարա» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ տվյալները՝ գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով:

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը պատշաճ ծանուցվել է Խորհրդում անցկացվող նիստերի ժամակացույցի վերաբերյալ, սակայն նախարարության կողմից լիազորված որևէ ներկայացուցիչ չի ներկայացել:

3. **«Սեդարա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.**

Խորհուրդը դիմել է «Սեդարա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2017թ. թիվ 03/73-3/9197-17 գրությամբ Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության տնօրեն Լյուդվիգ Հովհաննիսյանը:

4. **ՍՑ-ԷՍ-2017/05 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.**

Խորհուրդն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2017թ. թիվ 03/73-3/9197-17 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 09.06.2017թ. թիվ ԴՎԱ/1439 գրությունը և գրությանը կից ներկայացված փաստաթղթերը, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.04.017թ. նիստի թիվ 3 և 11.05.2017թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4»

ծածկագրով շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերը, «Սեդարա» ՍՊԸ-ի կողմից 30.05.2017թ. Խորհրդում կայացած նիստի ժամանակ հայտնած դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը մալուխների ձեռքբերման նպատակով կազմակերպել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնման ընթացակարգ (այսուհետ՝ նաև ընթացակարգ):

«Սեդարա» ՍՊԸ-ն ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրել է հայտ:

Հանձնաժողովը 03.04.2017թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 4.1 կետով որոշել է «Սեդարա» ՍՊԸ-ին ճանաչել առաջին տեղը զբաղեցրած մասնակից՝ ընթացակարգի 2-րդ, 7-րդ և 8-րդ չափաբաժինների մասով և առաջարկել է ներկայացնել ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

Սակայն, Հանձնաժողովը 11.05.2017թ. ժամը 11:30-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրությամբ մերժվել է Ընկերության կողմից ներկայացրած հայտը՝ սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը չներկայացնելու հիմնավորմամբ:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ պարտավորվում է հրավրով սահմված կարգով ներկայացնել նույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Նույն հայտի N 4.1 հավելվածով՝ առաջարկվող ապրանքների՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ հայտարարությամբ ընկերությունը պարտավորվել է ներկայացնել իր կողմից հաստատված՝ հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը:

Պաշտոնական ընթացակարգի քննության նպատակով 30.05.2017թ. կայացած նիստի ժամանակ Ընկերության ներկայացուցիչը հայտնեց, որ «armeps» էլեկտրոնային համակարգի միջոցով չի ստացել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը ներկայացնելու վերաբերյալ Պատվիրատուի համապատասխան ծանուցումը:

Խորհուրդը 05.06.2017թ. հարցում է կատարել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ պարզելու, թե արդյո՞ք Պատվիրատուի կողմից «armeps» էլեկտրոնային համակարգի ոչ ավտոմատ եղանակով նշված ծանուցումը «Սեդարա» ՍՊԸ-ին ուղարկվել է, թե՝ ոչ:

Նշված հարցմանն ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-15/7-ՀՀՊՆՆՏԱԴ-ՇՀԱՊՁԲ-2/4» ծածկագրով ընթացակարգի փորձաքննությունը ցույց է տվել, որ Պատվիրատուի կողմից 02.05.2017թ. «Սեդարա» ՍՊԸ-ին armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով ուղարկվել է էլեկտրոնային ուղերձ՝ կից ներկայացնելով նաև էլեկտրոնային ուղերձ-նամակը:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝ 47-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, իսկ ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

Ընթացակարգի հրավերի 7.5 կետի 1-ին ենթակետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է հրավերի պահանջներին

բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ **a.baghramyan@mil.am**, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Սեդարա» ՍՊԸ-ն սատցել է ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերն, ինչպես նաև առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

- 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:
- 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

բավարար գնահատված և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակցին՝ առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող սույն հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը, ինչպես նաև հայտով առաջարկված ապրանքի (ապրանքների) անվանումը և տեխնիկական բնութագրերը: Առաջին տեղը զբաղեցրած Մասնակիցը երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուի պաշտոնական էլեկտրոնային փոստին՝ **a.baghramyan@mil.am**, է ուղարկում նույն ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած Մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած Մասնակցին:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Սեդարա» ՍՊԸ-ն սատցել է ընթացակարգի հրավերով սահմանված ժամկետում որակավորման պահանջներին համապատասխանությունը հիմնավորող փաստթղթերն, ինչպես նաև առաջարկված ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագրերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը, սակայն պահանջվող փաստաթղթերը վերջինիս կողմից չեն ներկայացվել:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք)՝

• 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշները: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

• 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 31-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Խորհուրդը գտնում է, որ «Սեդարա» ՍՊԸ-ն հրավերով նախատեսված՝ որակավորումը հիմնավորող փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում չներկայացնելով՝ խախտել է ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.1 N 4.1 հավելվածներով ստանձնած՝ հրավերով սահմանված կարգով նույն հայտարարությունները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու պարտավորությունը:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ «Սեդարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Խորհրդին ներկայացված պաշտոնական ընթացակարգով առկա չէ որևէ տեղեկատվություն կամ ապացույց այն մասին, որ Ընկերությունը հայտը ներկայացնելու նախորդող տարվա ընթացքում թույլ է տվել Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված որևիցե խախտում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Խորհուրդը գտնում է, որ «Սեդարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով, 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

# ՈՐՈՇԵՑ

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 24.05.2017թ. «Սեդարա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով Խորհրդում նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման**
**խորհրդի անդամ՝**

**ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**